**Հավելված 5**
**Արդարադատության ակադեմիայի**
**կառավարման խորհրդի 2017 թվականի**
**հունվարի 26-ի թիվ ԿԽ-001/17/3 որոշման**

# ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է դատավորների 2017թ. հատուկ ուսուցման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի հիման վրա:

3. Ծրագիրը նպատակաուղղված է դատավորների մոտ հրազենի գործադրման հմտությունների ձևավորմանը և դրանց շարունակական կատարելագործմանը:

4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով:

5. Ուսումնառության ժամաքանակը նախատեսվում է 6 ակադեմիական ժամ: Ուսումնառությունն իրականացվում է մեկ օր ժամկետով:

6. Հատուկ ուսուցման ժամանակացույց է սահմանվում 2017 թվականի սեպտեմբեր ամիսը:

## II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԸ (ԴԱՍԸՆԹԱՑԸ) ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

| **N** | **Դասիչ** | **Անվանում** | **Ժ/ք** |
|---|---|---|---|
| 1. | J-S-001-17 | Հրազենի գործադրման հմտություններ | 6 |

**1. J-S-001-17. Հրազենի գործադրման հմտություններ**

Դասընթացը պայմանավորված է դատավորների մոտ հրազենի գործադրման հմտություններ ձևավորելու և դրանք կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է հրազեն գործադրելու, պահելու, տեղափոխելու անվտանգության կանոնները, հրազենային վնասվածքներ ստացած անձանց առաջին բժշկական օգնության հիմունքները, ինչպես նաև հրազենի կիրառման գործնական պարապմունքները: